(անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է **Պատվիրատուի ղեկավարի որոշման բողոքարկման** հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն>> ՓԲԸ-ի՝ <<Սուրբ Աստվածամայր>> ԲԿ ՓԲԸ-ի 17.03.2025թ.-ի թիվ 133 ծանուցմամբ կայացված 16.10.2023թ.-ին կնքված թիվ <<ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/38>> ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը /որոշումը/ անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am